Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիրը հաստատելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____2022 թվականի N _____ L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ) ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիրը՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

N ___ Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ) ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումը պայմանավորված է հանրապետությունում հողերի մասնատվածության մակարդակի կրճատման, արտադրողականության բարձրացման, բերրիության պահպանման ու բարձրացման, կապիտալ ներդրումների ներգրավման անհրաժեշտությամբ։
- Ծրագրի իրականացման նպատակն է փոքր չափերով և մասնատված գյուղատնտեսական հողատարածքների միավորման ու խոշորացման միջոցով՝
- խթանել գյուղատնտեսական արտադրողականության բարձրացմանը և ինքնարժեքի իջեցմանը.
- խթանել նոր աշխատատեղերի ստեղծմանը.
- խթանել հողերի նպատակային օգտագործմանը և արդյունավետ կառավարմանը.
- նպաստել գյուղատնտեսության մեջ պետական և մասնավոր կապիտալ ներդրումների ծավալների ավելացմանը.
- նպաստել գյուղատնտեսության ոլորտում մրցակցության բարձրացմանը։
- Ծրագրի մասնակիցներն են՝
- ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ շահառու).
- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).
- Շահառուները կարող են օգտվել նաև գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության այլ ծրագրերից, բացառությամբ նույն հողակտորի վրա միևնույն նպատակով իրականացվող ծրագրերի։
- Շահառուներին տրամադրվելու է պետական աջակցություն՝ ծրագրի N 1 աղյուսակով նախատեսված՝ շահառուի կողմից փաստացի իրականացված միջոցառումների ծախսերի փոխհատուցման տեսքով, շահառուի և նախարարության միջև կնքվող փոխհատուցման

պայմանագրի (այսուհետ՝ փոխհատուցան պայմանագիր) հիման վրա։ Փոխհատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է նախարարության կողմից։

- Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական նշանակության հողամասերի առանձին գույքային միավորների ձեռքբերմամբ և դրանց սահմանների միավորմամբ՝ առնվազն 100 հա հանրագումարային մակերեսով, (այսուհետ՝ միավորված հողամաս), խրախուսել հանրապետությունում առկա գյուղատնտեսական մասնատված հողակտորների միավորմանը (կոնսոլիդացիային)։
- Միավորված հողամասի ընդհանուր մակերեսում՝
    - առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի մակերեսների հանրագումարը, ներառյալ՝ ջրավազանների կառուցման համար անհրաժեշտ հողատարածքները, պետք է լինի առնվազն 100 հա,
    - առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի միավորների թվաքանակը՝ առնվազն 40 միավոր։
    - շահառուին սեփականության իրավունքով պատկանող հողամաս(եր)ի մակերեսի չափը չի կարող գերազանցել միավորված հողամասի ընդհանուր մակերեսի 10%-ը,
    - առանձին գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր հողամասի ձեռքբերումը պետք է իրականացվի փոխհատուցման պայմանագրի կնքումից հետո։
- Ծրագրից օգտվելու նպատակով փոխհատուցման պայմանագիր կնքելու համար շահառուն նախարարություն է ներկայացնում դիմում (դիմումի ձևը սահմանում է նախարարությունը) և տեղեկանք կադաստրի կոմիտեից՝ իր անվամբ անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ։ Նախարարությունը, դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված դիմումը և շահառուի հետ կնքում փոխհատուցման պայմանագիր։
- Փոխհատուցման պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը, շահառուն նախարարություն է ներկայացնում հաշվետվություն (հաշվետվության օրինակելի ձևը մշակում է նախարարությունը և ծրագրի հաստատումից հետո 1 ամսվա ընթացքում հրապարակում նախարարության կայքում), որը ներառում է շահառուի կողմից տվյալ եռամսյակի ընթացքում իրականացված միավորման գործընթացների, իսկ միավորման գործընթացներն օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտելուց հետո՝ միավորված հողամասում N 1 աղյուսակով նախատեսված միջոցառումների և աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն։ Միավորված հողամասում N 1 աղյուսակով նախատեսված միջոցառումների և աշխատանքների իրականացման ժամկետները սահմանվում են փոխհատուցման պայմանագրով։
- Ծրագրից օգտվելու համար շահառուն պարտավոր է միավորված հողամասում իրականացնել N 1 աղյուսակում նշված աշխատանքները կամ դրանց մի մասը։
- Սույն ծրագրի 9-րդ կետից բացի, շահառուն պարտավոր է՝
    - միավորված հողամասի նկատմամբ ապահովել առանձին գույքային միավորների սահմանների միավորման պետական գրանցումն իր անվամբ (այսուհետ՝ հողամասերի միավորում).

    - հողամասերի միավորումն և N 1 աղյուսակում նշված աշխատանքները կամ դրանց մի մասը ավարտել փոխհատուցման պայմանագրի կնքման օրվան հաջորդող օրվանից առավելագույնը 2 տարվա ընթացքում.
    - ջրավազան(ներ)ը կառուցել՝ միավորված հողամասի յուրաքանչյուր 1 հա մակերեսի համար ոչ պակաս, քան 1000 խորանարդ մետր ջրի ծավալով, ապահովել ջրային ռեսուրսների հասանելիությունը:
- Ծրագրի շրջանակում շահառուի կողմից կատարված ծախսերի ռիսկը կրում է շահառուն:
- Ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց դրա: Վերջինիս հետ համագործակցությունից կախված փոխհատուցվող գումարի չափը փոփոխության ենթակա չէ:
- Յուրաքանչյուր շահառուի համար սահմանված՝ միավորված հողամասի յուրաքանչյուր 1 հա-ի գնահատված ընդհանուր ծախսերի առավելագույն սահմանաչափը 2760000 ՀՀ դրամ է (հաշվարկները ներկայացվում են N 1 աղյուսակում):
- Այն դեպքում, երբ հողամասերի միավորումը շահառուի կողմից իրականացվել է առանց N 1 աղյուսակում նշված որևէ աշխատանքների կատարման, ապա շահառուն սույն ծրագրի 15-րդ կետով նախատեսված դիմումին կից ներկայացնում է տվյալ աշխատանքի կատարման անհրաժեշտության բացակայության վերաբերյալ գրավոր հիմնավորումներ: Սույն կետում նշված գրավոր հիմնավորումների բացակայության կամ նախարարության կողմից դրանց՝ ոչ բավարար համարվելու դեպքում չկատարված աշխատանք(ներ)ի համար N 1 աղյուսակում նախատեսված ծախսը փոխհատուցման ենթակա չէ:
- Հողամասերի միավորման գործընթացն ավարտելուց հետո փոխհատուցման պայմանագիր կնքած շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով գրավոր դիմում է ներկայացնում նախարարություն՝ դիմումին կցելով.
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- միավորված հողամասի նկատմամբ անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.
- N 1 աղյուսակով նախատեսված աշխատանքների կամ դրանց մի մասի իրականացման համար փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը: Ընդ որում՝ այդ աշխատանքները պետք է իրականացված լինեն ծրագրով նախատեսված փոխհատուցման պայմանագրի կնքումից հետո:
- Նախարարությունը, սույն ծրագրի 15-րդ կետով նախատեսված դիմումն ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դիմումում ներկայացված տեղեկատվությունները և ուսումնասիրության նպատակով իրականացնում մոնիթորինգ (նախարարության կողմից սահմանված կարգով): Մոնիթորինգի արդյունքների հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է եզրակացություն՝ հողերի միավորման և N 1 աղյուսակում նախատեսված աշխատանքների կատարման արդյունքները ծրագրի պահանջներին համապատասխանելու (դրական եզրակացություն) կամ չհամապատասխանելու (բացասական եզրակացություն) վերաբերյալ:
- Մոնիթորինգի դրական եզրակացության դեպքում նախարարությունը

20 աշխատանքային օրվա ընթացքում շահառուի հաշվին փոխանցում է սույն ծրագրի պահանջներին համապատասխան հաշվարկված փոխհատուցման գումարը։ Բացասական եզրակացության դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում այդ եզրակացությունը նախարարության կողմից տեղեկացվում է շահառուին։

- Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից։
- Ծրագրի ֆինանսական գնահատականի համար հիմք է ընդունվել կանխատեսումը, որ միավորված հողերի ընդհանուր մակերեսը 2023 թվականին կկազմի շուրջ 1000 հա, 2024 թվականին՝ շուրջ 1500 հա, 2025 թվականին՝ շուրջ 2000 հա։
- Ծրագրի իրականացման գնահատված արժեքը 2023 թվականին կկազմի 2.76 մլրդ դրամ, 2024 թվականին՝ 4.14 մլրդ դրամ, 2025 թվականին՝ 5.52 մլրդ դրամ։
- Շահառուներն ազատվում են ծրագրի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիայի) պայմանագրերը վավերացնելու համար նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի, ինչպես նաև՝ սեփականության իրավունքը գրանցելու համար պետական տուրքի վճարումներից՝ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի ժդ) կետի և 29-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ մասի պահանջների։ Սույն կետով նախատեսված պետական տուրքերի վճարումից ազատման համար շահառուն համապատասխան նոտարական գործողություններ իրականացնող մարմնի և գույքային իրավունքների գրանցում իրականացնող մարմնին է ներկայացնում փոխհատուցման պայմանագիրը, որը պետք է պարունակի տվյալներ ձեռքբերվող հողամասերի վերաբերյալ։
- Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝
- գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման մակարդակի նվազեցում՝ շուրջ 4500 հա-ով.
- գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածության մակարդակի նվազեցում՝ շուրջ 0.84%-ով.
- համախառն արտադրանքի ավելացում՝ շուրջ 10%-ով.
- գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության բարձրացում.
- ոռոգելի հողատարածությունների ավելացում՝ շուրջ 4500 հա-ով.
- ծրագրի մասնակից տնտեսավարողների եկամուտների ավելացում և վճարունակության բարձրացում.
- հողերի շուկայի զարգացում.
- նոր աշխատատեղերի ստեղծում.
- մշակվող հողատարածքների ծավալների ավելացմամբ վճարվող հարկերի մուտքագրում.
- գյուղատնտեսական տեխնիկայի և աշխատուժի ծախսերի կրճատում՝ առնվազն 11%-ով։
- Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերը՝
- Միավորվող (կոնսոլիդացվող) հողամասերի ձեռքբերման իրավական փաստաթղթերի հետ կապված խնդիրներ (սեփականատերերի բացակայություն, ժառանգության ճանաչման գործընթաց, իրավունքների գրանցման բացակայություն, անհայտ սեփականատերեր և այլն).
- Գյուղատնտեսական նշանակության հողերի գնի բարձրացում.

- Առանձին հողամասերը մեկ գույքային միավորում միավորելու տեխնիկական անհնարինություն:

Աղյուսակ N 1

1 հա գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման համար փոխհատուցվող ծախսերը

	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի քանակը	Միավոր արժեքը
1.	Մակերեսային և խորքային քարերի համավքում քարհավաք մեքենաներով և կուտակում:	հա	1	300000
2.	Հավաքված քարերի տեղափոխում:	հա	1	100000
3.	Տարածքի հարթեցում գրեյդերով:	հա	1	75000
4.	Տարածքի հողի անալիզ, մեխանիկական կազմի և հզորության որոշում:	հա	1	20000
5.	Գոմաղբի, թռչնաղբի, տորֆի և զանազան կոմպոստների կիրառում:	տ/հա	30-40	5000
6.	Խորը վար տրակտորային գութաններով 30-35 սմ:	հա	1	50000
7.	Հողի նախապատրաստական աշխատանքներ՝ չիզել փխրեցում մինչև 1 մ խորությամբ:	հա	1	65000
8.	Ոռոգման նպատակով ջրավազանի կառուցում	$մ^3$	1000	2000000
	Ընդամենը			